https://doi.org/10.46991/S&L/2020.88.0070

ՀԱՇՏՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅԱՆ ՏԵՍԱԿՆԵՐԸ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅՈՒՆՈՒՄ

Վարդուշ Եսայան
ԵՊՀ քաղաքացիական դատավարության ամբիոնի դոցենտ, իրավ. գիտ. թեկնածու

Քաղաքացիական դատավարությունում տնօրինչականության սկզբունքն առավել ցայտուն արտահայտվում է դատարանի վարույթում գտնվող վեճը հաշտության համաձայնությամբ ավարտելու կողմերին վերապահված հնարավորության մեջ[1]: Կողմերի տնօրինչական այս գործողությունն ուղղված է գոյություն ունեցող վիճելի իրավական հարաբերության կամավոր կարգավորմանը:

Դատական պրակտիկայի ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ հաշտության համաձայնության հաստատման հիմքով հարուցված գործերի վարույթը կարճելու դեպքերը բավականին տարածված են ՀՀ-ում:

Դատական պրակտիկայում առանձնանում են հաշտության համաձայնության երկու՝ դատական և արտադատական տեսակներ: Ընդսմին, հաշտության համաձայնությունը կարող է կնքվել և՛ դատական, և՛ արտադատական կարգով: Դատավարագիտության մեջ սովորաբար արտադատական է համարվում այն համաձայնությունը, որի կնքումը կապված չէ կողմերի միջև դատարանում գոյություն ունեցող վեճի հետ: Ընդ որում, նշվում է, որ քաղաքացիական դատավարության օրենսդրությամբ կարգավորվում է միայն դատական հաշտության համաձայնությունը, որը կողմերի միջև իրավունքի մասին վեճի դադարեցման պայմանների շուրջ կնքվող որոշակի պայմանավորվածություն է՝ կողմերի համար փոխադարձաբար ընդունելի պայմաններով: Միայն դատարանի կողմից հաստատվելուց հետո է, որ հաշտության համաձայնությունը ձեռք է բերում դատարանի՝ օրինական ուժի մեջ մտած վճռի ուժ և հիմք հանդիսանում հաշտության համաձայնությամբ սահմանված պարտավորությունների հարկադիր կատարման համար:

Հետաքրքրական է դատական և արտադատական հաշտության համաձայնությունների տարանջատման վերաբերյալ դատավարագետներ Լ.Ի. Ֆիշմանի[2] և Կ.Ա. Անոխինի[3] դիտարկումները: Այսպես, վերջիններս արտադատական հաշտության համաձայնությունը դիտարկում են որպես գրավոր ապացույցների մի տեսակ, որի հավաստիությունը և ապացուցողական նշանակությունը պարզվում են դատարանի կողմից՝ կախված փաստաթղթի բովանդակությունից, վավերացման ձևից, գործի հանգամանքներից: Դատական հաշտությունը կողմերի համաձայնությունն է վեճը կոնկրետ պայմաններով դադարեցնելու մասին, որը կնքվում է դատարանում, հաստատվում նրա կողմից՝ դրանից հետո ձեռք բերելով դատարանի՝ օրինական ուժի մեջ մտած դատական ակտի ուժ:

Դատավարագիտության մեջ հանդիպում ենք մի շարք մոտեցումների, ըստ որոնց արտադատական է համարվում այն հաշտության համաձայնությունը, որը դադարեցրել է կողմերի միջև գոյություն ունեցող իրավունքի մասին վեճը մինչ դատա-

[1] Տե՛ս **Եսայան Վ. Գ.** Տնօրինչականության սկզբունքը և տնօրինչական գործողությունները քաղաքացիական դատավարությունում, ԵՊՀ, Երևան, Հայրապետ, 2015, էջ 152:
[2] Տե՛ս **Фишман Л.И.,** Движение гражданского процесса. Харьков, Юридическое издательство НКЮ УССР, 1926, էջ 141-142:
[3] Տե՛ս **Анохин К.А.** ,Судебные мировые сделки// Советская юстиция. 1959, N 9, էջ 52:

րան դիմելը: Սրան հակառակ՝ մի շարք դատավարագետներ արտադատական են համարում այն համաձայնությունը, որը թեև կողմերի միջև կնքվել է դատարան դիմելուց հետո, բայց դատարանից դուրս: Ըստ վերջիններիս, նայած թե որտեղ է կնքվել հաշտության համաձայնությունը, այն անհրաժեշտ է բաժանել դատական և արտադատական տեսակների: Նրանք արտադատական են համարում դատական նիստից դուրս կնքված հաշտության համաձայնությունը[1]:

Կարծում ենք՝ առավել արդարացված է վերջին մոտեցումը այն հիմնավորմամբ, որ մինչև դատարան դիմելը կողմերի միջև գոյություն ունեցող իրավունքի մասին վեճի վերաբերյալ կնքվող համաձայնագիրը ոչ թե արտադատական հաշտության համաձայնություն է, այլ քաղաքացիաիրավական գործարք, իսկ հաշտության համաձայնությունը՝ որպես դատավարական տարր, օգտագործվում է միայն դատարան դիմելուց հետո:

Ըստ Ռ.Գ. Պետրոսյանի՝ արտադատական հաշտությունը գրավոր պայմանագիր է, որը ներկայացվում է դատարան, կցվում գործին և եթե ընդունվի դատարանի կողմից, ապա կառաջացնի նույն իրավական հետևանքները, ինչ որ դատական հաշտությունը[2]: Ինչ վերաբերում է դատական հաշտությանը, ապա այն կայացվում է դատական նիստում, ձևակերպվում գրավոր և մտցվում դատական նիստի արձանագրության մեջ: Այս երկուսի տարբերակիչ հատկանիշն այստեղ հաշտության համաձայնություն կնքելիս դատարանի ներկայությունն է, ինչպես նաև այն կնքելուն ուղղված՝ դատարանի և կողմերի գործողությունները:

Հաշտության համաձայնության առանձին տեսակների մասին խոսելիս անհրաժեշտություն է առաջանում քննարկել նաև հաշտության համաձայնության կնքումը հարկադիր կատարման վարույթում՝ որպես հաշտության համաձայնության ինքնուրույն տեսակ:

Այսպես, թե՛ Հայաստանի Հանրապետության գործող քաղաքացիական դատավարության օրենսգիրքը, թե՛ «Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» ՀՀ օրենքը կողմերին տալիս են հաշտության համաձայնության կնքման հնարավորություն նաև դատարանի վճիռն օրինական ուժի մեջ մտնելուց հետո՝ կատարողական վարույթում: Այսպես, «Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» ՀՀ օրենքի 8-րդ հոդվածը, որը վերաբերում է կատարողական վարույթում կողմերի իրավունքներին ու պարտականություններին և սահմանում, որ կատարողական գործողություններ կատարելիս կողմերն իրավունք ունեն կնքելու նաև հաշտության համաձայնություն: Իսկ ՀՀ Քաղաքացիական դատավարության օրենսգրքի 285-րդ, 286-րդ և 287-րդ հոդվածները վերաբերում են հարկադիր կատարման ընթացքում հաշտության համաձայնության կնքման կարգին և պայմաններին: Այդ կերպ կողմերին հնարավորություն է տրվում իրենց կամահայտնությամբ փոփոխել նաև օրինական ուժի մեջ մտած դատական ակտը:

Դատարանի վճռի հարկադիր կատարման ընթացքում կնքվող հաշտության համաձայնությունը ունի որոշակի առանձնահատկություն, որը հնարավորություն է տալիս այն տարանջատել գործի քննության ընթացքում կնքվող հաշտության համաձայնությունից: Այսպես, ի տարբերություն գործի քննության ընթացքում կնքվող հաշտության համաձայնության՝ կատարողական վարույթի փուլում հաշտության համաձայնությունը կնքվում է այն ժամանակ, երբ դատարանը արդեն լուծել է կողմերի միջև գոյություն ունեցող վեճը: Ավելին, հայցվորի տրամադրության տակ է նաև օրինական ուժի մեջ մտած այն դատական ակտը, որի հիման վրա էլ կողմին տրվում է կատարողական թերթ:

---

[1] Տե՛ս Гражданский процесс: учебник, под ред. М.К. Треушникова, 2-ое изд., М., Городец, 2007, էջ 402:

[2] Տե՛ս **Պետրոսյան Ռ.Գ.,** Հայաստանի քաղաքացիական դատավարություն,-երրորդ հրատ., Եր.,Երևանի համալս. հրատ., 2007, էջ 260:

Հարկ է նկատել, որ կատարողական վարույթում հաշտության համաձայնության կնքումը և հաստատումը չեղյալ են դարձնում մինչ այդ ուժի մեջ մտած դատական ակտը: Համակարծիք լինելով Մ.Ա. Ռոժկովայի դիրքորոշմանը՝ գտնում ենք, որ կատարողական վարույթում կողմերի՝ հաշտության համաձայնության կնքման պատճառը ոչ թե իրավունքի մասին վեճն է, այլ կատարումը լրիվ ծավալով իրագործելու հնարավորության վերաբերյալ կասկածները[1]:

Դատական ակտերի հարկադիր կատարման փուլում հաշտության համաձայնությունը ըստ էության պատասխանողի կողմից իր առջև դրված պարտավորությունների կամավոր կատարումն է՝ հրաժարվելով դրա հարկադիր կատարումից, կամ էլ հարկադիր կատարման դադարեցում, եթե այդպիսի գործընթացն արդեն սկսել էր: Կատարողական վարույթը մի կողմի գերիշխող դրությունն է, որն ունի դատարանի կողմից հաստատված իրավունքը պահանջելու պարտավորության կատարում մյուս կողմից, որը գտվում է համեմատաբար նվազ շահավետ վիճակում՝ որպես պարտավոր անձ:

Այսպիսով, տնօրինչականության սկզբունքը գործում է նաև դատարանի վճռի հարկադիր կատարման ընթացքում, քանի որ հաշտության համաձայնություն կնքելու հնարավորություն օրենքով կողմերին տրված է նաև կատարողական վարույթում: Քանի որ հաշտության համաձայնություն կնքելու կողմերի հնարավորությունը բխում է տնօրինչականության սկզբունքից, կատարողական վարույթում հաշտության համաձայնություն կնքելիս կողմերը իրենց սեփական կամքի և նախաձեռնության կրողներն են, հենց իրենք են իրենց գործողություններով ընթացք տալիս կատարողական իրավահարաբերությունների ծագմանն ու զարգացմանը: Կողմերը իրենք են սեփական հայեցողությամբ որոշում հաշտության համաձայնություն կնքելու պայմանները: Պետք է ընդգծել, որ կատարողական վարույթի փուլում կնքվող հաշտության համաձայնությունը չի առնչվում վիճելի իրավահարաբերության առարկային, այլ շոշափում է այնպիսի հարցեր, ինչպիսիք են պարտավորության կատարման եղանակը, այն կատարելու ժամկետները և կարգը: ՔԴՕ 285-րդ հոդվածի համաձայն՝ կողմերի հաշտության համաձայնությունը կարող է վերաբերել նաև վճռի կատարման եղանակին, ժամկետներին և կարգին:

Հաշտության համաձայնությունը թե՛ դատական քննության ժամանակ, թե՛ վճռի հարկադիր կատարման ընթացքում ներառում է երկու փուլ, այսինքն՝ բաղկացած է իրար հաջորդող երկու գործողություններից.

1) պարտատիրոջ և պարտապանի միջև հաշտության համաձայնության կնքում,

2) դատարանի կողմից հաշտության համաձայնության հաստատում:

ՀՀ Քաղաքացիական դատավարության օրենսգիրքը, նախատեսելով հաշտության համաձայնության կնքման հնարավորությունը նաև դատական ակտերի հարկադիր կատարման փուլում, դրա կնքման առանձնահատկություններին անդրադառնում է 38-րդ գլխում: Այսպես, նույն օրենսգրքի 285-րդ հոդվածի 1-ին մասը սահմանում է, որ կողմերն իրավունք ունեն հաշտության համաձայնություն կնքել դատարանի վճռի հարկադիր կատարման ընթացքում: Այդպիսով կողմերին հնարավորություն է տրվում ինքնուրույն դադարեցնել վճռի հարկադիր կատարումը հաշտության համաձայնություն կնքելու միջոցով: Մասնավորապես, ինչպես դատաքննության փուլում կնքվող հաշտության համաձայնության դեպքում, այս պարագայում ևս գործող օրենսգիրքը հաշտության համաձայնության ձևին ներկայացնում է ընդհանուր պահանջ՝ նախատեսելով, որ կողմերը հաշտության համաձայնությունը կնքում են գրավոր՝ իրենց կողմից ստորագրված մեկ փաստաթուղթ

[1] Տե՛ս **Рожкова М.А.,** Мировое соглашение в искогом производстве и на стадии исполнения (по материалам судебной практики). Приложение к журналу, «Хозяйство и право», 2003, էջ 63:

կազմելու միջոցով (ՔԴՕ 285-րդ հոդվածի 3-րդ մաս), որը բացառում է առանց հաշտության համաձայնության վերաբերյալ փաստաթուղթ կազմելու անհրաժեշտության դատարանում բանավոր հայտարարություն անելու միջոցով հաշտության հասնելու կողմերի հնարավորությունը:

Դատարանի վճռի հարկադիր կատարման ընթացքում հաշտության համաձայնությանը վերաբերող օրենսդրության նորմերի ուսումնասիրություններից պարզ է դառնում, որ այն որոշակիորեն տարբերվում է դատաքննության փուլում կնքվող հաշտության համաձայնությունից: Այսպես, եթե դատաքննության փուլում կնքված հաշտության համաձայնությունը ներկայացվող բոլոր պահանջներին համապատասխանելու դեպքում պետք է հաստատի դատարանը և դրա վերաբերյալ կայացնի վճիռ, ապա կատարողական վարույթի փուլում ընթացակարգը փոքր-ինչ այլ է: ՀՀ Քաղաքացիական դատավարության օրենսգրքի 285 հոդվածի 4-րդ կետով սահմանված կարգով կողմերը իրենց կնքած հաշտության համաձայնությունը ներկայացնում են հարկադիր կատարողին: Իսկ հարկադիր կատարողն իր հերթին, ստանալով կողմերի հաշտության համաձայնությունը, պարտավոր է կասեցնել կատարողական վարույթը և անհապաղ դիմել կատարողական թերթ տված դատարան՝ ներկայացնելով կողմերի հաշտության համաձայնագիրը, որպեսզի դատարանը այն հաստատի: Փաստորեն, այստեղ կարևոր դեր ունի հարկադիր կատարողը: Մինչև կատարողական վարույթը չկասեցվի նրա կողմից, հաշտության համաձայնությունը չի կարող դատարանում դառնալ քննության առարկա: Ընդ որում, հարկադիր կատարողի կողմից՝ կողմերի հաշտության համաձայնություն կնքելու վերաբերյալ դիմումի դեպքում կատարողական վարույթի կասեցումը հարկադիր կատարողի կողմից պարտականություն է, ոչ թե իրավունք, քանի որ «Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» ՀՀ օրենքի 37 հոդվածը հստակ նշում է, թե որ դեպքերում է հարկադիր կատարողը պարտավոր կասեցնել կատարողական վարույթը, և այդ դեպքերից մեկը կողմերի՝ հաշտության համաձայնություն կնքելու մասին դիմումն է: Դատարանի կողմից հաշտության համաձայնությունը հաստատվելու դեպքում հարկադիր կատարողը պետք է կարճի կատարողական վարույթը: Քաղաքացիական դատավարության օրենսգրքի 287-րդ հոդվածի համաձայն, դատարանը հարկադիր կատարողի դիմումի հիման վրա վճիռը վերանայում է առանց դատական նիստ հրավիրելու՝ դիմումն ստանալուց հետո՝ յոթնօրյա ժամկետում: Վճիռը վերանայելու արդյունքով դատարանը կայացնում է նոր վճիռ, որում շարադրվում է կողմերի հաշտության համաձայնությունը բառացիորեն:

Ինչպես գիտենք, իրավաբանական գրականության մեջ շատ հաճախ հաշտության համաձայնությունը դիտարկվում է որպես քաղաքացիաիրավական գործարք: Որպես վառ օրինակ կարելի է առանձնացնել Ե. Վ. Ռուսինովային, որը գտնում է, որ հաշտության համաձայնությունը դրանում առկա պայմանների համաձայնեցման միջոցով կողմերի կողմից իրականացվող հայեցողական գործողություններ են՝ ուղղված վեճը հարթելուն և գործի քննությունը ավարտելուն: Այստեղից հետևում է, որ հաշտության համաձայնությունը մի շարք դատավարագետների կողմից ընկալվել է որպես քաղաքացիաիրավական գործարք: Ե. Վ. Վասկովսկին գտնում էր, որ հաշտության համաձայնությունն ըստ էության քաղաքացիաիրավական գործարք է, հետևաբար դրա վավերության պայմանները որոշվում են նյութական իրավունքի նորմերի հիման վրա, իսկ կնքման ձևն ու դատավարական հետևանքները՝ դատավարական նորմերով[1]: Մ. Ա. Ռոժկովան հաշտության համաձայնությունը դիտարկում է որպես քաղաքացիաիրավական գործարք, որին ուղղա-

[1] Տե՛ս **Васьковский Е.В.** Учебник гражданского процесса, под. ред. В.А. Томсинова, М., 2003, էջ 363:

կիորեն անհրաժեշտ է տալ որոշակի դատավարական ձև[1]:

Ուսումնասիրության արդյունքում պարզ է դառնում, որ նրանց միջև իհարկե կան որոշակի նմանություններ, բայց, այդուհանդերձ, հաշտության համաձայնությունը տարբերվում է քաղաքացիաիրավական գործարքներից: Այսպես,

1. նախ՝ նրա նպատակն է լուծել կողմերի միջև գոյություն ունեցող վեճը:

2. Հաշտության համաձայնություն կարող է կնքվել քաղաքացիական գործով վարույթ սկսելուց հետո՝ մինչև այն ավարտելը: Իրականացվում է դատարանի ներկայությամբ, առանձին դեպքերում նաև նրա անմիջական մասնակցությամբ և պետք է հաստատվի նրա կողմից քաղաքացիական դատավարության սահմանած կարգով վճիռ կայացնելու միջոցով:

3. Հաշտության համաձայնության պայմանները կամավոր չկատարելու դեպքում այն ենթակա է հարկադիր կատարման այն նույն կարգով, ինչպես որ գործն ըստ էության լուծող դատական ակտը:

4. Հաշտության համաձայնությունն ունի մի շարք առանձնահատկություններ: Մասնավորապես, հաշտության համաձայնության մասին դատարանի վճիռն օրինական ուժի մեջ մտնելուց հետո դատարանն այլևս իրավասու չէ քննել նույն գործը, իսկ ինչ վերաբերում է հայցվորին, ապա նա զրկվում է նույնական հայցով դատարան դիմելու իրավունքից, քանի որ դատարանը նրան կատարողական թերթ է տալիս հաշտության համաձայնությամբ սահմանված նրա իրավունքների հարկադիր իրացման համար:

Այսպիսով, ելնելով նշվածից՝ կարելի է հետևություն անել, որ հաշտության համաձայնությունը քաղաքացիաիրավական գործարքների հետ ունի ընդհանրություններ այնքանով, որքանով պարունակում է նաև քաղաքացիաիրավական գործարքի տարրեր, և նրա վավերության պայմանները որոշվում են նյութական իրավունքի նորմերի հիման վրա, սակայն այն կնքման ձևով ու առաջացող իրավական հետևանքների առումով դատավարական ինստիտուտ է:

[1] Տե՛ս **Рожкова М.А.** Применение в коммерческом обороте мировой сделки. М., 2004, էջ 259:

ВИДЫ ПРИМИРИТЕЛЬНЫХ СОГЛАШЕНИЙ В ГРАЖДАНСКОМ ПРОЦЕССЕ

Вардуш Есаян
Доцент кафедры гражданского процесса ЕГУ,
кандидат юридических наук

В рамках представленной работы были изучены и обсуждены судебно-внесудебные виды примирительных соглашений в гражданском процессе, способы их выражения, порядок и особенности заключения. В рамках работы также были затронуты особенности заключения мирового соглашения в исполнительном производстве.

TYPES OF CONCILIATION AGREEMENTS IN CIVIL PROCEEDINGS

Vardush Yesayan
Docent at the YSU Chair of Civic Procedure,
Candidate of Legal Sciences

In the framework of the presented work, the judicial-extrajudicial types of conciliation agreement in civil litigation, the ways of their expression, the procedure and peculiarities of the conclusion were studied and discussed. Within the framework of the work, the peculiarities of concluding a conciliation agreement in the enforcement proceedings were also referred to.

Բանալի բառեր – հաշտության համաձայնություն, արտադատական կարգ, դատական ու կատարողական թերթ, հարկադիր կատարող, դատական քննություն, կատարողական վարույթ

Ключевые слова: Мировое соглашение, внесудебный процесс, суд, исполнительный лист, принудительный исполнитель, судебное разбирательство, исполнительное производство

Key words: Settlement agreement, out-of-court procedure, court, writ of execution, compulsory enforcement officer, court proceedings, enforcement proceedings